945

1. Ո՜վ Աստված, կօրհնենք Քեզ անդադար
Հրաշալի Քո փրկության համար,
Քո սիրո մասին մենք կերգենք,
Քո անունը մեծարենք:
Ուրախացի՛ր, ողջ երկիր,
Փրկիչը մեր հաղթել է,
Աստծուն փառաբանիր.
Վերցրեց Նա մեր ցավերը,
Մեղքերը մեր ներեց,
Լցրեց հույսով սրտերը
Եվ ցնծության յուղով օծեց:

***
1. Երգի՛ր Տիրոջը մի նոր երգ,
Երգի՛ր Տիրոջն, ամբողջ երկիր,
Երգի՛ր Տիրոջ հաղթությունը.
Քրիստոս հաղթեց մեղքին ու մահին:
Մեր Աստված, հրաշալի ես,
Մեծ փառքով փառավորված:

2. Ցնծությամբ կանչի՛ր դու Տիրոջը,
Նա արժանի է օրհնության,
Երգի՛ր դու հոգով և մեծարի՛ր.
Աստված մեծապես փառավոր է:
Արժանի (2), արժանի ես օրհնության,
Ալելուիա՛, Աստված մեծապես փառավոր է: